«Կրթություն առանց սահմանի»- ՀԿ
Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»

Ուսուցիչ՝ Աննա Թադևոսյան

Ղեկավար՝ Վ. Բաբաջանյան

Երևանի համար 167 հիմնական դպրոց

Երևան-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ…….....…….…
5
1.1 Դարձվածքները ժամանակակից հայերենում……..……..……..…5
1.2 Առած-ասացվածքները ժամանակակից հայերենում…….....……10
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ…….....15
2.1 Դարձվածքների և ասացվածքների ուսուցումը տարրական դասարաններում…….....1
5
2.2 Դարձվածքների և ասացվածքների ուսուցման մեր փորձը……..…..…..25
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….…….……3
1
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...……32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական պարզ, բովանդակալից լեզվական իրողություններին՝ դարձվածքներին, առածներին ու ասացվածքներին, հաճախ կարելի է հանդիպել տարրական դասարանների մայրենի լեզվի դասագրքում: «Դրանք,- ինչպես նշում է Ա. Տեր Գրիգորյանը,- մեծ մասամբ տրված են լինում որպես լրացուցիչ կամ օժանդակ նյութեր, որոնք պարզաբանում են հիմնական բնագրի այս կամ այն կողմը և կամ խորացնում ու ամբողջացնում են դրանց գլխավոր միտքը: Աշակերտներին պետք է սովորեցնել գործնական կերպով դրանք զանազանել միմյանցից, մատչելի ձևով բացատրել դրանք, վերլուծել ըստ բովադակության ու ձևի, անգիր անել ու օգտագործել խոսքի մեջ»:[1]

Դարձվածքներում, առածներում ու ասացվածքներում արտացոլված են ժողովրդական կյանքն ու մտածողությունը, ուստի դրանք ուսուցանելիս և վերլուծելիս հարկ է ուշադրություն դարձնել դրանց ուսուցման մեթոդներին ու հնարներին:

Մեր ուսումնասիրության թեման դարձվածքերի և ասացվածքերի ուսուցման քննությունն է կրտսեր դպրոցում: Թեմայի *արդիականությունը* պայմանավորված է նրանով, որ ժամանակակից մեթոդների ու հնարների դիտարկմամբ բացահայտվում է դարձվածքների, ասացվածքների ուսուցման նշանակությունը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման, մտածողության զարգացման գործում:

Մեր հետազոտության *նպատակն* է ուսումնասիրել դարձվածքների ու ասացվածքների ուսուցման գործընթացը տարրական դասարաններում: Նպատակին հասնելու համար մենք առաջադրել ենք հետևալ *խնդիրները*՝

ա. Ուսունասիրել դարձվածքների տեսակները, առանձնահատկությունները ժամանակակից հայերենում,

բ. Բացահայտել առածների և ասացվածքների տարբերակման սկզբունքները,

գ. Քննել դարձվածքների և ասացվածքների ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում,

դ. Ցույց տալ դարձվածքների և ասացվածքների ուսուցման քայլաշարը,

ե. Կատարել հետազոտություն դարձվածքների և ասացվածքների ուսուցման

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 211:

վերաբերյալ և ներկայացնել այն:

Թեմայի վերլուծությունը իրականացվել է համաժամանակյա նկարագրության և վերլուծության մեթոդով: Դարձվածքների և ասացվածքների ուսուցման փորձը ներկայցնելիս կիրառվել են ուսուցման համագործակցային և փոխգործուն մեթոդ:

Ուսումասիրությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Հետազոտության տեսական արժեքը դասագրքերի, մեթոդական ձեռնարկների փաստական նյութի քննության հիման վրա դարձվածքների, ասացվածքների ուսուցման գործընթացի կարևորումն է: Ուսումնասիրության արդյունքում կատարված մեկնաբանությունները, դարձվածքների և ասացվածքների ուսուցման ժամանակ առաջարկված մեթոդները գործնական նշանակություն ունեն. կարող են օգտակար լինել մեր աշխատանքային գործունեության ընթացքում, մայրենի լեզվի ուսուցման հարցերով զբաղվող մասնագետներին, ինչպես նաև ուսանողներին նմանօրինակ հետազոտություններ կատարելիս:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն կազմում է համակարգչային շարվածքի 40 էջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1.1 Դարձվածքները ժամանակակից հայերենում

Դարձվածքները առօրյա, ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառային միավորներ են, որոնք յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողությունը, տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը դրսևորող լեզվական միջոցներ են, որոնց շնորհիվ արտահայտվում են տվյալ ժողովրդի բարքերն ու սովորույթը, կենցաղն ու ապրելակերպը, ինչպես նաև նրան բնորոշ հոգեկան, հոգեբանական խառնվածքն ու կենսափիլիսոփայությունը[2]: Դարձվածները միևնույն ժամանակ յուրաքանչյուր անհատի ազգային մտածողությունն են արտահայտում:

«Դարձվածքը երկու և ավելի բառերի կայուն կապակցություն է, որի անդամները միասին հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն: Դարձվածքի իմաստը չի բխում նրա անդամների իմաստի գումարից և հաճախ նույնիսկ կապ չունի ուղղակի իմաստների հետ»[3]:

Դարձվածքները կայուն և ամբողջական բառակապակցություններ են և՛ իրենց բաղադրիչների կազմով, և՛ քերականական շարահյուսական որոշակի կաղապարներով: Դարձվածքները նաև լեզվի պատկերավորման միջոցներ են, խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը: Դարձվածքների կարևոր հատկանիշներից մեկը նրա փոխաբերական-այլաբանական իմաստն է, ուստի և դարձվածքների մասին եղած բազմաթիվ բնութագրումների մեջ կարելի է նշել այն, որ դարձվածքը փոխաբերական - այլաբանական միասնական իմաստ ունեցող կայուն, բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություն է:

Դարձվածքը հաճախ ունենում է իրեն համանուն բառակապակցությունը, որը գործածվում է ոչ թե դարձվածային, այլ ուղիղ իմաստով. օրինակ՝ *լեզու առնել*

---

[2] Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, 2007, էջ 178:
[3] Մնացականյան Ե., Գրականագիտական ուղեցույց - բառարան, Երևան, 2013, էջ 96:

«խոսելու համարձակություն ձեռք բերել», ուղիղ իմաստով՝ «լեզու գնել», *տանձի պոչ* «շատ նիհար», ուղիղ իմաստով՝ «տանձի կոթունը»:

Որոշ դարձվածքներ չունեն ուղիղ իմաստով գործածվող համանուն բառակապակցություններ:Դրանք առաջացել են հենց որպես միայն դարձվածք. օրինակ՝ *խելքը կտրել* «գիտակցել», *լեղին ճաքել* «սարսափահար լինել», *բաց սրտով* «անկեղծությամբ», *մաղով ջուր կրել* «անմտությամբ զբաղվել» և այլն:[4]

Դարձվածքները լեզվի արտահայտչականության ու պատկերավորման լավագույն միջոցներից են և հանդես են գալիս թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում: Դրանք խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են, «խոսքի աղն ու համեմունքը»[5] և դրսևորվում են բոլոր տեսակի ոճերում: Առանձնապես մեծ է դարձվածքի դերը գեղարվեստական գրականության մեջ: Դարձվածքների միջոցով հաճախ խոսքն ազատվում է չորությունից ու երկարաբանությունից: Դարձվածքներն իրենց իմաստային նրբերանգներով մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն՝ այլաբանորեն ներկայացնելով ասելիքը: Փոխաբերությունը (վերաիմաստավորումը) դարձվածքի էական հատկանիշն է. այն ներհատուկ է ցանկացած դարձվածքի: Խսոսքի մեջ դարձվածքները հարաբերակցվում են ինչպես բառերին (անվանողական), այնպես էլ նախադասություններին (հաղորդակցական):

Դարձվածքը երկու և ավելի բառերի այնպիսի կայուն, պատրաստի բառակապակցություն է, որի բաղադրիչները վերաիմաստավորված են, այսինքն՝ դարձվածքի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բառարանային բուն իմաստը և ձեռք է բերում նոր նշանակություն, այսինքն՝ տվյալ դարձվածքի արտահայտած ընդհանուր իմաստը այդ բաղադրիչների մեխանիկական գումարը չէ: Եվ անշուշտ, դարձվածքի համար կարևորը նաև նրա փոխաբերական-այլաբանական իմաստ արտահայտելն է: Եթե դարձվածքը չունի փոխաբերական իմաստ, ապա այն սովորական, ազատ, ոչ կայուն բառակապակցություն է: Ինչ խոսք, դարձվածքների նման բնութագրում տալիս անհրաժեշտ է նկատի ունենալ դարձվածքի մեջ մտնող բաղադրիչների շարահյուսական կապը, նրանց հարաբերությունն ու իմաստային միաձուլության աստիճանը, ըստ որի էլ կատարվում է դարձվածքների իմաստային-շարահյուսական դասակարգում: Հետևելով ռուս լեզվաբանության մեջ իշխող տեսակետներին՝

---

[4] Զաքարյան Հ.Ավետիստան Յու., Բառագիտություն, Երևան,«Զանգակ»,2016, էջ 37 :
[4] Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, էջ 12:

սովորաբար դարձվածքները բաժանում են երեք խմբի:

1. Դարձվածաբանական սերտաճում. այս խմբի մեջ մտնում են այն դարձվածքները, որոնց իմաստը չի բխում դարձվածքի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից:

Դրանք իմաստային տեսակետից այնպիսի անբաժանելի, միասնական բաղադրիչներ են, որոնց մեջ բառերը, կորցնելով արդեն իրենց ունեցած, հանրորեն ընդունված իմաստը, տվյալ բառակապակցության մեջ վերաիմաստավորվում են և արտահայտում բոլորովին մի նոր իմաստ, ինչպես գլխի ընկնել, գլուխը կորցնել, աչքից ընկնել, աչքով տալ, երես առնել, սիրտը շահել, աչքի գրող և այլն: Դարձվածաբանական սերտաճման հիմնական հատկանիշը նրա բառային անբաժանելիությունն է, բաղադրիչների իմաստային բացարձակ սերտաճումը միաժամանակ մեծ մասամբ համարժեք է բառին և համանշանակ բառերի հետ գտնվում է հոմանշային հարաբերության մեջ: «Այս դարձվածքները,- նշում է Ա. Սուքիասյանը,- որոշակի քերականական կարգերի «խոսքի մասերի» պատկանող բացարձակապես անբաժան, միաձույլ իմաստային միավորներ են[6]: Նրանց բաղադրիչների մեջ կենդանի, գործող շարահյուսական կապի բացակայության պատճառով նախադասության մեջ հանդես են գալիս իբրև մեկ ամբողջական, անբաժանելի անդամ: Դարձվածքի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր բառ ոչ միայն չունի հանրորեն գիտակցված և ընդունված իր բառային իմաստը, այլև ընդհանրապես զուրկ է որևէ ինքնուրույն, առանձին բառային իմաստից»: Դիտարկենք օրինակներ՝ *ականջ դնել, աչքերը փախցնել, գլուխ տանել, աչքի պոչով, ականջին օղ անել, աչք դնել, գլուխը ուտել, գլուխը յուղել, աչքից գցել:*

2. Դարձվածաբանական միասնություն, այս խմբի մեջ մտնում են այն դարձվածքները, որոնք չնայած իմաստաբանորեն նույնպես անբաժան են, ամբողջական, բայց, ի տարբերություն նախորդների, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին փոխաբերական իմաստներով: Այս դեպքում դարձվածքի իմաստը բխում է առանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից, նրանց իմաստների միությունից, բայց այն տարբերությամբ, որ բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, դարձվածքը ամբողջապես ստանում է

---

[6]Սուքիասյան Ա., ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999, էջ 302, Ջահուկյան Գ., Աղայան Էդ. և ուրիշներ, Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 475:

վերաիմաստավորված, ընդհանրացված բովանդակություն: Դարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը: Դարձվածքային միասնությունները հիմնականում պատկերավոր արտահայտություններ են, որով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցություններից: Դրանցից են՝ *աչք գցել, գլխին տալ, արյունը թափել, երես դարձնել, վիզ ծռել, ոտքերն ընկնել, դուռը երեսին փակել* և այլն: Այս խմբի դարձվածքները կոչվում են նաև իդիոմներ կամ իդիոմատիկ արտահայտություններ:

3. Դարձվածքային կապակցությունը երրորդ խումբն է, որի մեջ մտնում են դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ բառերի իմաստներից: Դրանք այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մտնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես և դարձվածաբանորեն կապված գործողություն: Այս կարգի դարձվածքներում բաղադրիչներն հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով, այնուամենայնիվ, մնում են կախյալ վիճակում, բաղադրիչներից մեկը հաճախ հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Այլ կերպ ասած՝ սրանց ընդհանուր նշանակությունը լիովին կախված է բաղադրիչների նշանակությունից, ուստի և հաճախ կազմվում են ազատ և դարձվածաբանորեն կապված բաղադրիչներից, ինչպես՝ *հոնքերը կիտել, գլուխը կախել, կանաչ ճանապարհ, քիթը ջարդել, ատամները սրել* և այլն:

Որոշ լեզվաբաններ տարբերում են նաև չորրորդ խումբը՝ **դարձվածքային արտահայտությունը**, որոնց մեջ զետեղում են այն բառակապակցությունները, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն բաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, այս դեպքում դարձվածքի ընդհանուր իմաստը ամբողջապես կախված է և բխում է դարձվածք կազմող բաղադրիչների բառային իմաստից, դարձվածքի բառային կազմը և դարձվածքային իմաստը կայուն են:

Դարձվածքային արտահայտությունները սովորական, ազատ բառակապակցություններից հիմնականում տարբերվում են իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ, ինչպես՝ *լինել, թե չլինել, ոսկե միջակություն* և այլն:

Դարձվածքային արտահայտությունների թվին են դասվում նաև.

1. Գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը, հեղինակային դիպուկ արտահայտությունները, ինչպես, օրինակ՝ ավգյան ախոռ, դամոկլյան սուր, Քաջ Նազար, Դոն Քիշոտ:

2. Ժողովրդական խոսակցական անեծքները, մաղթանքները, օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական իմաստ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝ մի բարձի ծերանաք, հողեմ գլուխդ, գետինը մտնես:

3. Առած-ասացվածքային արտահայտությունները, որոնք վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝ գայլի գլխին ավետարան կարդալ, երկաթը տաք-տաք ծեծել, ճտերն աշնանը հաշվել:

Ներկայացնելով դարձվածքների դասակարգման նշված մոտեցումները՝ հարկ է նշել, որ դարձվածքների կիրառությունը գեղարվեստական խոսքում, նրանց ոճական արժեքը ամենից առաջ պայմանավորված է նրանց բաղադրիչների իմաստային և շարահյուսական կապակցության եղանակով:

Անվանողական դարձվածքները ստորոգումից զուրկ դարձվածքներն են, որոնք անվանողական արժեք ունեն և համարժեք են բառերին: Այս դեպքում դրանք վերաիմաստավորված կերպով նշում են անձը, առարկան, երևույթը, սրանց հատկանիշները[7]:

1. Ուզվոր երեխայի պես **վիզը ծռած**(խեղճացած) ձեռը դեմ էր անում...
2. Բախտը, սերը լույսի պե՞ս սև գեշերի վրա է իջնում ու քեզ նման լույսն էլ

բաժին է ընկնում մի **բերանը կապածի**(անլեզու):

3. Մեր ղեկավարն այնինչ լրջացել, սրվել ու **բաց աչքերով**(զգոն,աչալուրջ) տեսնում էր մեր երկրի ամենասիրուն այն անկյունը, ուր մեր պապի ջաղացն ու այգին էին եղել, հիմա ավերված ու լքված էին:

4. Կին է, չէ՞, շնորհք է, չէ՞, **աչքի պոչով**(գաղտագողի) նկատել էր, որ մենք ականջ ենք դնում:[8]

Ինչպես բերված օրինակներում, այնպես էլ բոլոր դարձվածքներում, խիստ ակնառու է մի կարևոր հանգամանք, քիչ բառերով խորիմաստ մտքեր են արտահայտվում:

Հաղորդակցական դարձվածքները այլաբերական-փոխաբերական իմաստ արտահայտող այնպիսի կառույցներ են, որոնք խոնարհված բայով բաղադրիչ են

---

[7] Դարձվածների իմաստները տե՛ս Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, Բաղիկյան Խ., Ուսումնական դարձվածաբանական բառարան, Երևան, 2002:

8Սահակյան Վ.Ա.,Սահակյան Վ.Վ.,Ներսիսյան Ռ.Ժ.,Դպրոցական բառագիրք,Երևան, 2019,էջ 348,289,281:

ունենում և հանդես գալիս նրա հետ իբրև ամբողջական, ամփոփ միավոր[9]:

Նախադասություններին հարաբերակից դարձվածքները հաղորդակցական արժեք ունեն: Այդպիսի դարձվածքներում պարտադիր ստորոգում է լինում, ինչպես՝

1. Իսկ Դիլանն **աչքերը խփել** ու չէր ուզում տեսնել անցնող Սոնային... :
2. Իշխան հայրը թախտին **աչքը** մի որպե **կպցրել էր,** որպեսզի քիչ հետո վրա ընկներ մի որևէ գործի:
3. **Ձեներրդ կտրեք:**
4. Սիմոնի խոսքին ուշք չդարձրին, միայն Վրացոնց Ալեքսին Սիմոնի **գլխարկը ճակատին քաշեց,** և Սիմոնն այնքան էր խեղճ, որ ինքը երեսը շուռ տվեց:
5. — Չի՛ կարելի,— ասաց Սայլվորը,— կդառնաս Քրիստոս, կքշես Բեթղեհեմ, ժողովուրդդ քեզ **խաչի կհանի:**

Մեջբերված օրինակներում դարձվածքներն արտահայտված են սահմանական եղանակի անցյալ վաղակատար, անցյալ կատարյալ, ենթադրական եղանակի ապառնի, հրամայականի ապառնի ժամանակաձևերի բայաձևերով: Այսպիսով՝ հաղորդակցական դարձվածքները, ըստ իրենց գործառության ոլորտների, դատողություններ են անձերի, առարկաների, երևույթների ու նրանց հատկանիշների վերաբերյալ:

Մեծ է ու բազմաբնույթ դարձվածքի ոճական արժեքը հատկապես գեղարվեստական խոսքում, այն նախ և առաջ պատկերավոր ու տպավորիչ է դարձնում խոսքը, նպաստում նրա հակիրճությանն ու սեղմությանը, ազգային երանգավորում հաղորդում և՛ հեղինակի, և՛ կերպարների խոսքին, բացահայտում նրանցից յուրաքանչյուրին բնորոշ լեզվամտածողությունը:

1.2 Առած-ասացվածքները ժամանակակից հայերենում

Առածներն ու ասացվածքները լեզվի կարևորագույն արտահայտչամիջոցներն են: Դրանք շարահյուսորեն կազմված պարզ և բարդ նախադասություններ են, որոնք որոշ բարոյախոսություն են արտահայտում, խորհուրդ են տալիս կամ ուսուցանում:

[9] Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1991, էջ 310:

«Առածներն ու ասացվածքները պատկանում են ժողովրդական բանահյուսության էպիկական ժանրին և այդ ժանրի մյուս ստեղծագործությունների նման կյանքն արտացոլում են օբյեկտիվացված, «ինքնակա» ձևով: Ի տարբերություն էպիկական մյուս ստեղծագործությունների (էպոս, հեքիաթ և այլն), որոնց մեջ կյանքի երևույթներն ու հարաբերությունները ավելի կամ նվազ ծավալուն սյուժեի միջոցով են արտահայտված, առածների ու ասացվածքների մեջ այդ արվում է չափազանց սեղմ բանաձև-ընդհանրացումներով»[10]:

Առածը գերազանցապես փոխաբերական-այլաբանական արտահայտություն է, որը շարահյուսորեն կազմված է պարզ և բարդ նախադասություններից. Օրինակ՝ «Հավը կածի, ուրուրը կտանի», որտեղ ակնարկվում է հասարակական կյանքում գոյություն ունեցող անարդարությունն ու շահագործումը:

Առածներն ու ասացվածքները սովորաբար կարճասույթ պատկերավոր բանաձևեր են, որոնք կիրառվում են կենդանի խոսակցական լեզվում կամ գրավոր խոսքում ասելիքն ավելի դիպուկ, համառոտ և պատկերավոր դարձնելու նպատակով[11]:

Ասացվածքը խրատական բնույթի կարևոր արտահայտություն է: Ի տարբերություն առածի՝ ասացվածքը կիրառվում է ուղղակի նշանակությամբ, թեև ունի ընդհանրացված իմաստ և լայն մեկնաբանման հնարավորություններ է ընձեռում. օրինակ՝ «Օրենքը հարստի համար է գրած, պատիժը՝ աղքատի», որի մեջ ժողովուրդը արձանագրում է սեփականատիրական կարգերի տիրապետության պայմաններում օրենքի՝ ունևոր դասակարգի ձեռին շահագործման գործիք լինելու փաստը, «Ահը վեր է, քան թե մահը» ասացվածքում շեշտված է վախի զգացման մեծ ուժը և նրա ազդեցությունը մարդու վրա:

Ասացվածքների տարածվածության գլխավոր պատճառն այն է, որ դրանք անմիջական պատասխան են տալիս ժողովրդին հուզող բոլոր հարցերին: Կարևոր նշանակություն ունի նաև ասացվածքների սեղմ ձևը, որոշ ասացվածքների դեպքում՝ նաև հանգավորումն ու չափազանցությունը: Դրա համար էլ դրանք հեշտությամբ են ընկալվում և մտապահվում:

«Ասացվածքներն իրականությունը, մարդկային մտորումներն ու պատկերացումներն արտահայտում են ուղղակի և անմիջապես, առանց

---

[10] Ղանալանյան Ա., Հայկական առածանի, Երևան, 1951, էջ 11:

[11] Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 244-245:

այլաբանական միջնորդության»[12]. օրինակ՝ «Մարդուն ընկերով կճնաչեն», «Հայը մինչև չբեզարի, չի նստի», «Շատ մի սիրիր, ատել կա» և այլն:

Ասացվածքների մեծ մասի հիմնական աղբյուրը հասարակական կյանքն է: Ժողովրդական առած կամ ասացվածք են դարձել գրականությունից եկող այնպիսի ասույթներ կամ թևավոր արտահայտություններ, որոնք կապված են բանավոր ստեղծագործության ավանդույթների հետ և բովանդակությամբ համահունչ են ժողովրդի աշխարհայացքին ու մտածողությանը: Այսպես՝ ժողովրդական բանահյուսությունից էպիկական ժանրին պատկանող ստեղծագործություններից առաջ եկած ասացվածքի օրինակ է աշխատավոր ժողովրդի առողջ կենսահայեցողության արտահայտությունը հանդիսացող և խրատ պարունակող հետևյալ ասացածվածքը՝ «Առաջ կեր՝ վերջը գոհացիր», որի հիմքը հետևյալ կենդանական զրույցն է աղվեսի ու կաքավի մասին. «Աղվես զկաքավ բռնեց: Կաքավ ըսաց. - Աղվես ի՞նչ տենիս: Ըսաց. -Քե տուտիմ: Ըսաց.- Փառք տու աստծուն, նոր զի կե:-Ինչ փառք իտու աստծուն, կաքավ բերնեն թռավ: Աղվես դարձավ, ըսաց. -Էնու տուն ավեր ըլի ինչ չուր կուշտ չուտի փառք տա աստծուն»[13]:

Ժամանակակից հայերում ասացվածքները կարող ենք դիտարկել չորս կառուցվածքաիմաստային տեսակներով:

Ա. Ասացվածքներ՝ բաղադրիչ մասերի կախվածությամբ, օրինակ՝ «Կարմիր կովը կաշին չի փոխում»:

Բ. Ասացվածքներ՝ բաղադրիչ մասերի հաստատուն- տարբերակային կախվածությամբ, օրինակ՝ «Շատ ջրեր են հոսել այդ ժամանակից»:

Գ. Ասացվածքներ՝ բաղադրիչ մասերի հաստատուն փոփոխական կախվածությամբ, օրինակ՝ «Համբերության բաժակը լցվել է»:

Դ. Ասացվածքներ՝ բաղադրիչ մասերի հաստատուն տարբերակային - փոփոխական կախվածությամբ, օրինակ՝ «Սիրտը բերանն ընկավ»:

Լեզվաբանության մեջ երբեմն վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք առածներն ու ասացվածքները նույնանում են դարձվածքների հետ, թե ոչ: Ոմանք հակված են կարծելու, որ դրանց մեջ, անշուշտ, կան որոշ ընդհանրություններ, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ դրանք ամենից առաջ լեզվական պատրաստի միավորներ են և ոչ թե ստեղծվում են խոսքային, հաղորդակցական գործընթացում,

[12] Տես նույնը՝ էջ 246:

[13] Հովսեփյան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 30:

ինչպես ազատ բառակապակցությունները և ապա դրանք պատկերավոր արտահայտություններ են, թևավոր խոսքեր, և, այնուամենայնիվ, դրանց բաղադրիչներն արտահայտում են պատկերավոր, փոխաբերական իմաստ: Բայց և մյուս կողմից կարծում են, որ սրանք «չի կարելի դարձվածք համարել առաջին հերթին այն պատճառով, որ շարահյուսորեն վերլուծելի կառուցվածքներ են, և դրանց բաղադրիչները բառային տեսակետից ինքնուրույն են: Դրանք բառային առանձին միավորներ են, մինչդեռ բուն դարձվածքների բաղադրիչները չունեն բառային անկախություն... և ապա առածները և ասացվածքները որոշակիորեն նա-խադասություն են, որոնց իմաստը համապատասխանում է բաղադրիչների իմաստին, իսկ դարձվածքը բառային մի ամբողջություն է և տարրալուծելի չէ իմաստային և շարահյուսական տեսակետից: Այլ կերպ ասած՝ ինչպես նկատելի է բերված բնութագրումից, «առածների ու ասացվածքների բովանդակությունը՝ որպես կանոն, մեկ բառով հնարավոր չէ արտահայտել»[14]:

Որքան էլ այս տեսության հետևորդները նշում են առածների, ասացվածքների և թևավոր խոսքերի տարբերությունը դարձվածքներից, բայց և այնպես, ի վերջո, չեն կարող անտեսել այն հանգամանքը, որ դրանք բավականաչափ շփման եզրեր ունեն, դեռ ավելին՝ մի շարք դեպքերում կարող է անցում կատարվել առածից դեպի դարձվածք (ինչպես առհասարակ լեզվական բազմաթիվ իրողություններից կարող են կազմվել դարձվածքները), ինչպես՝ ավազի վրա տուն շինել, մկան ծակը հազար թումանով առնել, կաղ էշով քարավանի խառնվել և այլն: Չպետք է մոռանալ նաև, որ և՛ առածների, և՛ասացվածքների, և՛ թևավոր խոսքերի կազմում կարող են լինել մի շարք դարձվածքներ. ինչպես՝ *«Պստիկի լեզուն կարճ կլինի», «Կալ մանող աղվեսը արյունն աչքի տակ կառնի», «Գինին մարդուն չի մեռցնի, բայց շան օրը կգցի»*, և ապա՝ մի շարք դարձվածքներ էլ առաջացել են հենց առածների և ասացվածքների հիման վրա, ինչպես՝ *պղտոր ջրում ձուկ բռնել, ձեռքը փրփուրին գցել, ջուր ծեծելն* և այլն:

Առածները, ասացվածքները, թևավոր խոսքերն ու արտահայտությունները՝ մանավանդ նրանց ոճական երանգավորումներով ու արտահայտ չականությամբ, պետք է դասել դարձվածքների շարքը և դիտել իբրև դարձվածքային արտահայտություններ, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն անբաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից: Այս կարգի բառակապակցությունների շարքին կարելի է դասել գրական ծագում ունեցող թևավոր

[14] Ջահուկյան Գ., Աղայան Է. և ուրիշներ, Հայոց լեզու, 1980, էջ 478:

խոսքերը, հեղինակային դիպուկ արտահայտությունները, զանազան ասույթներ: Ժողովրդական, խոսակցական մաղթանքներր, օրհնանքներն ու անեծքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և հենց փոխաբերական իմաստ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների, ինչպես՝ *կարապի երգ, ավգյան ախոռ, Քաջ Նազար, Ձախորդ Փանոս, ձայն բարբառոյ յանապատի, լինել, թե չլինել, մի բաժակ ջրում փոթորիկ* և այլն:

Առածներն ու ասացվածքները՝ որպես ժողովրդական բանահյուսության ժանրեր, խոսքի մեջ նույնպես հանդես են գալիս իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ, այսինքն՝ ստեղծվում են ոչ թե անմիջապես հաղորդակցման ընթացքում, այլ, ինչպես և մյուս դարձվածքները, փոխանցվում են պատրաստի վիճակում: Դրանք, իրենց բովանդակությամբ և ժանրային առանձնահատկություններով արտահայտելով ժողովրդի դարավոր իմաստությունը, իրենց կառուցվածքով, լեզվական տեսակետից փաստացի դարձվածքային արտահայտություններ են: Ըստ ժանրային սահմանման՝ առածները խրատական, իսկ ասացվածքները ոչ խրատական բնույթի պատկերավոր, դիպուկ արտահայտություններ են, կյանքի այս կամ այն երևույթի ընդհանրացումներ:

Ժողովրդական լեզվում գործածական առանձին առածների, ասացվածքների բաղադրիչներից մեկը որոշակի միտումով (հավանաբար որոշ դեպքերում խոսքին ավելի մեղմ բնույթ հաղորդելու կամ գուցե և գռեհկաբանություններից խուսափելու նպատակով) փոխվում է, դրանով իսկ, անտարակույս, թուլանում են տվյալ ասացվածքի կամ արտահայտության ուժգնությունն ու պատկերավորության աստիճանը: Այսպես՝ ժողովրդախոսակցական լեզվում բավականին տարածված *«էշ կերել է, էշ մեծացել»* պատկերավոր արտահայտությունը երբեմն փոխակերպում են *«հոտաղ կերել, հոտաղ մեծացել»* արտահայտության, ինչպես՝ «Հոտաղ կերել եմ, հոտաղ մեծացել, պարտական մնամ, որ ինձ մեկ լավ ճամփա ցույց տվեց»: Բնական է, որ նշված տարբերակում բավականին թուլացել է արտահայտության ուժգնությունը: Մեկ այլ դեպքում մարդկանց ծայրահեղությունը, ինչ-որ մի բանի անհնարինությունն ընդգծելու նպատակով ժողովուրդը գործածում է *«Եզը վեր են քաշում, տեսնեն տակին հորթ կա, թե չէ»* ասացվածք-դարձվածքը:

Այսպիսով՝ ասացվածքների կառուցվածքային-ոճական յուրահատ-կություններից մեկը նրանց բաղադրիչների կայունությունն է, անփոփոխելիությունը: Սակայն միշտ չէ, որ ոճական այս կամ այն նպատակադրմամբ կամ պարզապես հեղինակային այս կամ այն նախասիրությամբ արդեն իսկ ընտրված և գործածական որոշ ասացվածքներում գրողները կատարում են զանազան բնույթի

փոփոխություններ՝ ինչպես բառային կազմի, նրանց արտահայտած իմաստի, այնպես և բաղադրիչների շարադասության առումով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

2.1 Դարձվածքների և ասացվածքների ուսուցումը տարրական դասարաններում

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք է տարվում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ: Այս աշխատանքն իրականանում է ընդամենը տեքստի մակարդակում: Սակայն կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է նաև հատուկ աշխատանք մի շարք ուղղություններով: Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները պետք է իրականացնել միայն գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով դասագրքերում զետեղված բնագրերի վրա՝ առանց քերականական եզրույթներ հաղորդելու:

Այսպիսով՝ տարրական դասարանների մայրենիի ծրագրում դարձվածաբանության հատուկ ուսումնասիրություն նախատեսված չէ: Սակայն մայրենիի դասագրքերի բնագրերում կիրառված են բազմաթիվ դարձվածքներ, որոնց իմաստները, գործածության առանձնահատկությունները անպայմանորեն պետք է բացատրվեն աշակերտներին: Դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունների, ժողովրդական բանահյուսության շուրջ զրույցներ անցկացնելիս անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը բևեռել դարձվածքներով հարուստ խոսքի արտահայտչականության վրա՝ խրախուսելով դարձվածքների կիրառումը աշակերտների խոսքում:

Դարձվածքների ուսուցումը նպաստում է աշակերտի բառապաշարի

համալրմանը: Բառապաշարը երեխայի խոսքի, մտածողության ու աշխարհաճանաչողության զարգացման հիմքն է. ամեն ինչ մարդ ընկալում է բառերի մեջ կամ բառերի միջոցով, նույնիսկ շրջապատից ստացած անմիջական տպավորությունները, հույզերն ու ապրումները վերջին հաշվով կայունանում ու մտապահվում են բառային հիմքով: Այս առումով բառային աշխատանքը կամ բառապաշարի հարստացումը ոչ միայն խոսքի, այլև ընդհանուր զարգացման համար հսկայական ու անփոխարինելի նշանակություն ունի: «Մայրենի լեզվի» դասագրքի յուրաքանչյուր էջ ուսուցիչը պետք է օգտագործի երեխաների բառապաշարը նոր բառերով հարստացնելու համար, իսկ էջերի նկարները, բառաշարքերն ու փոքրիկ բնագրերը նյութ պետք է տան բառային աշխատանքի համար:

Նոր կամ անծանոթ բառերի, դարձվածքների մեծ մասը դասագրքի էջում տրված է լինում երկու անգամ՝ բառաշարքերում կամ նկարներով և կապակցված նյութի մեջ: Առաջին դեպքում ուսուցիչը բացատրում ու պարզաբանում է բառի իմաստը, երկրորդ դեպքում՝ ստուգում իմաստի ըմբռնումը, իսկ եթե դարձվածքը միայն բառաշարքում է տրված, այն կարելի է շարժական տառերով կազմել ու կարդալ տալ, գործածել նախադասությունների մեջ և այլն:

Ինչպես նշում է Ջ. Գյուլամիրյանը. «Դարձվածքները, որպես կանոն, փոխաբերությունների բնույթ են կրում, այսինքն՝ հենվում են բառի բազմիմաստության, այլաբանության, նրա լրացուցիչ «կերպարային» նշանակության վրա: Այդ իսկ պատճառով դարձվածքների բացատրությունը պետք է անցկացնել ոչ միայն համապատասխան հոմանիշների օգնությամբ, այլև դարձվածքի շուրջ տարվող աշխատանքն ավարտել՝ դրանք օգտագործելով նախադասությունների և կապակցված խոսքի մեջ»[15]:

Դարձվածքի ուսուցումը տարրական դասարաններում պետք է կազմակերպել մեթոդական հետևյալ շղթայով:

1. Դարձվածքի առանձնացում, իմաստի բացատրում:

Նշված խնդիրներն իրականացվում են ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տարվող բառակազմական, վերլուծական և այլ աշխատանքներով: Կիրառելի են դարձվածքի բացատրության հետևյալ հնարները.

ա) Դարձվածքի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը

[15] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան,«Զանգակ» , 2018, էջ 300:

ցույց տալու ճանապարհով, օրինակ՝ «փուշը մատից հանել» (ինչ-որ մեկին օգնել), «աչքը վրան մնալ» (մի բանի կարոտ մնալ), «սիրտը փորն ընկնել»(սաստիկ վախենալ) դարձվածքների իմաստները կարելի է բացատրել համապատասխան նկարի ցուցադրմամբ:[16] Մայրենիի դասագրքերում հաճախ է կիրառվում դարձվածքի իմաստի բացատրությունը համապատասխան նկարների միջոցով: Իսկ «Մայրենի 4» դասագրքում հանդիպում են առաջադրանքներ, ըստ որոնց՝ աշակերտները բնագրից պետք է գտնեն և դուրս գրեն այն դարձվածքները, որոնք վերաբերում են տրված նկարներին:[17] Նույն դասագրքում բերված է «մաղով ջուր կրել» դարձվածքը, որը բացատրվում է որպես անօգուտ, անիմաստ, անհնարին բան անել: Կից բերված են նաև նկարներ:[18]

գ) Դարձվածքի իմաստի բացատրություն՝ հականիշ դարձվածքի դիտարկմամբ: Հայոց լեզվի դարձվածքային կազմը հարուստ է նաև հականիշ դարձվածքներով: Դիտարկենք օրինակներ.

քար սիրտ - փափուկ սիրտ

սիրտը կպչել - սրտին չկպչել

բաց ձեռք - ձեռքը փակ

աշխարհ գալ - աշխարհից գնալ:

Հանդիպում են նաև դարձվածքների ուսուցմանը նպաստող այսպիսի առաջադրանքներ:

- Կրակն ընկնել արտահայտությունը կիրառել նախադասության մեջ ուղիղ և փոխաբերական իմաստներով: Օրինակ՝
  - Կացինը կրակն էր ընկել գյուղացու մեղքով:
  - Վարորդը կրակն էր ընկել հին ավտոմեքենայի ձեռքը[19]:
- Թվային բաղադրիչով դարձվածքները արտահայտի՛ր մեկ բառով.
  - Հավասարեցնել զրոյի,
  - Յոթ սարից այն կողմ,
  - Երկու քայլի վրա:

Դարձվածքներն օգտագործի՛ր նախադասության մեջ:[20]

---

[16] Սարգսյան Վ., Մայրենի 1, Երևան, «Մանմար», 2015, էջ 37, 51, 53:

[17] Թորոսյնա Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, Երևան, «Մանմար», 2016թ., էջ 114:

[18] Տես նույնը՝ էջ 66:

դ) Դարձվածքի իմաստի բացատրությունը նկարելով և այլն:

1.Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտվում է՝ ինչ բառերից է կազմված դարձվածքը: Տարրական դասարաններում սովորաբար տրվում է այսպիսի հարց. «Ո՞ր բառերից է կազմվել նշված դարձվածքը»: Թեև հաճախ դարձվածքի իմաստը չի բխում դարձվածքը կազմող բաղադրիչների ընդհանուր իմաստից, բայց դարձվածքի բացատրության նշված եղանակը ուղղագրության հետ կապեր ստեղծելու հնարավորություն է տալիս, քանի որ բացահայտվում են դարձվածքը կազմող բառերի արմատները՝ նպաստելով դրանց ուղղագրության յուրացմանը:

2.Դարձվածքների համեմատում՝ իմաստային տարբերությունների բացահայտման նպատակով, որն ստեղծում է նույն բառով կազմված դարձվածքների իմաստների սահմանազատման հնարավորություն, օրինակ՝ կարելի է ուսուցանել «գլուխ» բառով կազմված դարձվածքների այսպիսի շարք.

գլուխ բերել - հաջողեցնել, կարողանալ կատարել,

գլուխ գալ - իրականացվել,

գլուխ պահել - ա. մի կերպ ապրել, բ. ծուլորեն աշխատել,

գլուխ տանել - ձանձրացնել,

գլուխը լցնել - անօգուտ, ոչ պիտանի բաներ սովորել,

գլխի տակ փափուկ բարձ դնել - խոստումներով մեկին հանգստացնել,

գլխին գալ մի բան - փորձանքի հանդիպել,

գլխին խաղ խաղալ - խորամանկությամբ մեկին դժվարին, անախորժ վիճակի մեջ դնել,

գլխին նստել - մեկի վրա իշխող ազդեցություն ունենալ:

Օրինակ՝ մայրենիի դասագրքերում հաճախակի գործածական են դարձվածքների իմաստներին առնչվող վարժություններ: Դիտարկենք օրինակներ.

□Փոխաբերական և ուղիղ իմաստով բառակապակցությունները համապատասխանեցրո՛ւ միմյանց և գրի՛ր:[21]

---

[20] Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, Երևան, «Մանմար», 2016թ., էջ 78:

[21]Թորոսյան Կ., Խաչատրյան Հ.,Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, Երևան, «Մանմար», 2016, էջ 61:

Դարձվածքներ	Իմաստներ
Առատաձեռն լինել	Ունկը բաց պահել
Հպարտ լինել	Լեզուն իրեն քաշել
Սակավապետ լինել	Սիրտը տաք պահել
Շատախոս չլինել	Ձեռքը բաց պահել
Ջերմ ու հոգատար լինել	Մեջքը պինդ պահել
Ուշադիր և լսող լինել	Գոհանալ քչով

Աղյուսակ 1

□ Բացատրի՛ր ծանր ու թեթև անել, կյանքի-մահվան հարց է, փոքր ու մեծ չճանաչել, գնալ-գալ ունենալ, աչքերը փակել, բերանը բանալ, գրի սևն ու սպիտակը ջոկել, գույն տալ, գույն առնել, դրսից հայելի, ներսից ածելի դարձվածքների իմաստները:[22]

□Դարձվածքները և համապատասխան բացատրությունները գրի՛ր կողք կողքի:[23]

Դարձվածքներ	Իմաստներ
Ինչպես ձուկը ջրում	Շրջապատողներին շփոթեցնել, խորամանկել, շահադիտական նպատակով իրար խառնել իրադարձությունները:
Շատ ջրեր են հոսել	Իր միջավայրում է, իր ոլորտում, ազատ ու

[22] Տես նույնը՝ էջ 41:

[23] Թորոսյան Կ., Խաչատրյան Հ.,Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ.,Մայրենի 4, Երևան, «Մանմար», 2016,էջ 35:

	անկաշկանդ է զգում իրեն:
Ձուր պղտորել	Օգտվելով ուրիշների դժվարությունից, շփոթմունքից, խառը վիճակից՝ շահ քաղել:
Պղտոր ջրում ձուկ որսալ	Շատ ժամանակ է անցել:

Աղյուսակ 2

3. Բացատրություն՝ կռահման ճանապարհով: Ուսուցիչը մեջբերում է անծանոթ դարձվածքը ընդգրկող նախադասությունը և հարցնում է աշակերտներին. «Ի՞նչ եք կարծում՝ ինչ է նշանակում նշված դարձվածքը»:

4. Նորածանոթ դարձվածքների բացատրություն տեղեկատվական նյութերի միջոցով, այսինք՝ բառարաններով, մանկական հանրագիտարանների հոդվածներով և այլն:

5. Մեկնաբանող նկարագրություն հնարը արժեքավոր է նրանով, որ ստեղծում է անկաշկանդ զրույցի հնարավորություն: Տարրական դպրոցի աշակերտները սովորաբար խուսափում են նկարագրությունները վերարտադրելուց: Նշված խնդրի լուծման համար ուսուցիչը պետք է ուղղորդի, որ երեխաները պատմելիս խոսքում կիրառեն դարձվածքներ, ամբողջությամբ վերարտադրեն կարդացած ստեղծագործության մեջ զետեղված նկարագրությունները դարձվածքների օգնությամբ:

Բառային աշխատանքի հաջորդ փուլում ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի դարձվածքների և դրանցով նախադասությունների կազմման ուղղված աշխատանքներին: Վերջինս դարձվածքների կազմման, դրանց միջև իմաստային կապեր հաստատելու, հատկանիշը առարկային վերագրելու ամենապարզ ձևն է: Այն կարևոր ու անփոխարինելի նշանակություն ունի խոսքի գեղեցկացման ու ճոխացման համար, ուստի դարձվածքներ կազմելու աշխատանքի վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել և դրան որոշակի տեղ տալ լեզվական աշխատանքներում: Երբեմն առարկայի համար պետք է հատկանիշներ գտնել տալ, իսկ մերթ էլ՝ հատկանիշի համար կրող առարկա:

Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել: Այս վարժությունները նաև բառապաշարի հարստացման արժեք ունեն, որովհետև

յուրաքանչյուր դարձվածք, գործածվելով խոսքի մեջ, դառնում է երեխաների սեփականությունը:

Դարձվածքի ուսուցումը ընթերցանության կարևոր բաղադրիչ է: Տարրական դասարանների աշակերտների խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված :[24]

Դարձվածքի ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և դա ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել: Բառերի կապակցման, միմյանց վերագրելու ամենափոքր միավորը բառակապակցությունն է, որն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ նախադասության մեջ գիտակցվում է որպես ինքնուրույն, կայուն կամ ժամանակավոր կապակցություն: Այդ կապակցված լինելը կամ հատկանիշը առարկային վերագրելը պետք է արտահայտվի նաև կարդալու եղանակով կամ բառերի արտաբերման հնչերանգով, որպեսզի «գլխին նստել», «ականջին օղ անել», «պղտոր ջրում ձուկ որսալ» դարձվածքներից յուրաքանչյուրն արտաբերվի որպես իմաստով կապված միավոր, դրանցում եղած բառերը չհնչեն որպես առանձին ու անկախ միավորներ: Այստեղ դարձվածքի կազմի մեջ մտնող բառերի կապը զուտ տրամաբանական է, քերականական արտահայտություն չունի, սակայն ընթերցման ժամանակ ձայնի բարձրացումով ու ցածրացումով այս կապն այնպես ցայտուն պետք է արտահայտվի, որպեսզի լսողն այդ երկու բառն ընկալի որպես միմյանց հետ կապված մի ամբողջություն:

Կրտսեր դպրոցականներն իրենց խոսքում համեմատաբար քիչ դարձվածքեր են կիրառում: Ըստ Ջ. Գյուլամիրյանի պետք է հետևողական աշխատանք տանել, որ երեխաները դարձվածքները կիրառեն ոչ միայն բնագրերը վերարտադրելիս, այլև ինքնուրույն խոսքում:[25]

Դարձվածքների ուսուցման միջոցով իրագործվող ընթերցանության խնդիրներն ու նպատակները 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում հետևյալներն են.

- հարստացնել աշակերտի բառապաշարը,

---

[24]Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013, էջ 4-5:

[25] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ»,2018, էջ 288:

• ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,

• մաքրել, հղկել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,

• ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,

• ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարն ընկալելու, հերոսների գործողությունների տրամաբանականությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ,

• գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

Աշակերտը պետք է հանդես գա որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն:

Մայրենիի դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ բառային աշխատանքի միջոցով տարվող ընթերցանությունը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Բացի բառային աշխատանքից՝ դարձվածքների ուսուցման ժամանակ կարելի է կիրառել նաև ընթերցանության մեթոդի բաղադրատարրերը.

• զրույցը,

• բնագրի ընթերցումը,

• պատմումը,

• ամփոփումը:

Աշակերտների խոսքի զարգացման գործում մեծ դեր ունեն նաև առած-ասացվածքները: Առածների և ասացվածքնրի ուսումնասիրումը մեթոդիկայում մատուցվում է միասին, քանի որ դրանք մոտ են իրենց ժանրային առանձնահատկություններով, ուսուցման նպատակներով և խնդիրներով, այնուամենայնիվ, դրանք ունեն նաև տարբերություններ՝ պայմանավորված այլաբանական իմաստի առկայությամբ կամ բացակայությամբ:

Առածներն ու ասացվածքները թե՛ ձևով , թե՛ բովանդակությամբ և թե՛ լեզվական կողմով շատ նման են, բայց տարբեր են բնույթով: Առածներում բնորոշ

միտքը արտահայտված է անուղղակի՝ այլաբանական ձևով, օրինակ՝ «Լավ է գիտունին գերի, քան անգետին՝սիրելի», «Որ աղբյուրից մարդ ջուր խմի, այն աղբյուրին քար չի գցի», իսկ ասացվածքներում ուղղակի ձևով՝ առանց այլաբանության «Ամեն գործի վերջն է գովելի», «Բարի խոսքը հարստությունից լավ է»:

Առածներն ունեն երկու կողմ, մեկը՝ արտաքին, գրական-գեղարվեստական, իսկ երկրորդը՝ ներքին, բարոյախրատական. օրինակ՝ «Երկաթը տաք-տաք կծեծեն» առածը երեխաներն ընկալում են հենց ուղիղ իմաստով՝ *քանի դեռ տաք է՝ հեշտ է նրան կռելը*:

Այնուհետև կարելի է ներկայացնել առածի այլաբանական իմաստը՝*այսօրվա գործը վաղվան չեն թողնի:*

Առածի և ասացվացքի այս տարբերությունը երեխաներին ընկալելի պետք է դարձնել գործնական ճանապարհով՝ առանց տեսական բացատրությունների:

Առաջին դասարանում պետք է ներկայացնել առածի միայն ուղղակի իմաստը, որովհետև այլաբանական իմաստը դեռևս հասանելի չէ երեխաների գիտակցությանը: Իսկ երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններում կարելի է բացատրել առածների ոչ միայն ուղղակի, այլև այլաբանական իմաստը, վերլուծել, հասկացնել ոչ միայն այն ինչ տեսանելի է, այլ նաև այն, ինչը թաքնված է դրա տակ:Առածների ու ասացվածքների իմաստները կարելի է բացատրել նաև առակներով, որովհետև դրանք խտացված առակներ են՝ առանց կերպարների և գործողությունների, միայն արտահայտում են բարոյախրատական նորմեր: Եթե առածն ու ասացվածքը օգնում են ճիշտ հասկանալ առակների վերացական բովանդակությունը, ապա առակներն էլ կարող են օգնել հականալու առած-ասացվածքների կոնկրետ բովանդակությունը. օրինակ՝ «Մայրենի 3» դասագրքում որպես դասի նյութ բերված է Մխիթար Գոշի «Ճայը և սագը» առակը: Այստեղ՝ դասի վերջում, որպես դասի գաղափարի ամփոփում բերված է հետևյալ ասացվածքը՝ «Իմ լեզվով խոսող օտարն ավելի լավ է, քան իմ լեզուն չիմացող ազգակիցը»:[26]

Երեխաների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների զանազան տեսակներ ուսումնասիրում են տարբեր դասարաններում կամ ավելի ստույգ՝ դասարանից դասարան, դասագրքից դասագիրք փոխվում է դրանց հարաբերակցության բաշխումը:

Որպես դիպուկ և համառոտ խոսքի տեսակներ՝ առածներն ու ասացվածքները

[26] Սարգսյան Վ., Խաչատրյան Հ.,Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., Մայրենի 3, Երևան, «Մանմար» , էջ 68-69:

նպաստում են երեխաների լեզվի մշակմանն ու հարստացմանը, տրամաբանական պատկերավոր մտածողության, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Առածներն ու ասացվածքները երեխաների համար պետք է լինեն պարզ ու հասկանալի, այնուհանդերձ երեխաներին բացատրելու կարիք միշտ եղել է:Դրանք արտահայտված են ժողովրդական պարզ այլաբանությամբ:

Ասացվածքների ուսուցումը մայրենիի դասագրքերում առավելապես ներկայացվում է նկարներով և համապատասխան բացատրություններով: Այսպես՝ նախ ուսուցանվում է ասացվածքը՝ «Այսօրվա գործը վաղվան չեն թողնի», տրվում է բացատրությունը, այսինքն՝ չպետք է ծուլանալ, ասել՝ լավ, վաղը կանեմ: Եթե այսօր չանես, ուշ կլինի : Հաջորդ առաջադրանքը՝ հորինի՛ր պատմություն նկարների շուրջ՝ «Այսօրվա գործը վաղվան չեն թողնի» վերնագրով, նպատակաուղղված է ասացվածքի ուսուցման ամրապնդմանը: Աշակերտը ոչ միայն պիտի սովորի, ընկալի ասացվածքի իմաստը, այլև կարողանա այն հմտորեն կիրառել իր խոսքում:[27]

Այսպիսով՝ դարձվածքների և ասացվածքների ուսուցումը նպաստում է բառապաշարի հարստացմանը, ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը, վերլուծական հմտությունների դրսևորմանը, ստեղծագործական դաստիարակչական կողմի ընկալմանը, կրթության զարգացմանը և այլն:

[27] Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Մայրենի 2, Երևան , «Մանմար», 2016, էջ 41:

2.2 Դարձվածքների և ասացվածքների ուսուցման մեր փորձը (հետազոտական աշխատանք)

Ներկայացնենք մեր կողմից անցկացված դասի օրինակ («Թափառական երաժիշտներ», զետեղված է չորրորդ դասարանի դասագրքում):

Առարկա՝ Մայրենի[28]

Լայն թեմա՝ «Մեր քաղցրաբառ հայոց լեզուն»

Նեղ թեմա՝ «Թափառական երաժիշտները»

Դասարան՝ չորրորդ

Դասի տեսակը՝ համակցված

Դասի համառոտ պլան

- ✓ Հարց-պատասխան թեմայի վերաբերյալ
- ✓ Առաջադրանք՝ «Խառնված հերթականություն» մեթոդական հնարով,
- ✓ Հարցերի պատասխանում,
- ✓ Դարձվածքների կրկնություն,
- ✓ Տեքստի ընթերցում և առած-ասացվածքների առանձնացում, մեկնաբանում:

Նպատակները՝

- ✓ բնագիրը հասկանալով, արտահայտիչ, սահուն ընթերցելու կարողությունների զարգացում,
- ✓ երկխոսությունները հնչերանգով առանձնացնելու կարողությունների զարգացում,
- ✓ բառապաշարի հարստացում դարձվածքների միջոցով,
- ✓ աշակերտների ստեղծագործական կարողությունների և երևակայության

[28] Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.,Մայրենի 4, Երևան,«Էդիտ Պրինտ», 2015:

զարգացում:

Խնդիրները՝

- ✓ զարգացնել աշակերտների մտածողությունը, խոսքը,
- ✓ ընթերցել բնագիրը՝ ձայնի բարձրությունն ու տեմպը համապատասխանեցնելով իրավիճակների և հերոսների հույզերին,
- ✓ հարստացնել աշակերտների բառապաշարը՝ սովորեցնելով նոր բառեր, դարձվածքներ, ասացվածքներ,
- ✓ ձևավորել ստեղծագործական հմտություններ, փոխադրություն գրելու կարողություն:

Կահավորումը՝ նկարներ, քարտեր:

Կիրառվող մեթոդներ՝ «Խառնված հերթականություն», «Քառաբաժան»:

Դասի ընթացքը՝ կազմակերպչական պահ:

<u>Խթանման փուլ</u> Գրատախտակին փակցրեցինք քարտեր հետևյալ բովանդակու- թյամբ:

Աչք բացել	Ծորակից ջուր խմել
Բերանը ջուր առնել	Աչքին երևալ
Գլուխը յուղել	Ձուր բերել

Մեկնաբանեցինք այս արտահայտությունները (ուղղորդվեց, որպեսզի աշակերտները մեկնաբանեն դրանց բովանդակությունը):

Աչք բացել-զբաղմունքից, հոգսից ազատվել:

Ծորակից ջուր խմել:

Բերանը ջուր առնել:

Աչքին երևալ- նկատվել, նշմարվել:

Գլուխը յուղել-խաբել:

Ձուր բերել:

Բացատրեցինք, որ սրանք բառակապակցություններ են, որոնք կազմված են երկու և ավելի բառերից:

<u>Իմաստի ընկալման փուլում</u> կիրառեցինք «Խառնված հերթականություն» մեթոդը: Ստեղծագործության հաջորդաբար տեղի ունեցած իրադարձությունների խմբից հինգ-վեց իրադարձություն գրառեցինք առանձին թղթերի վրա:

1. Առաջին օրը նրանք չկարողացան հասնել Բրեմեն, ու երբ մութն ընկավ, մտան անտառ գիշերելու: Ավանակն ու շունը պառկեցին մի մեծ ծառի տակ, իսկ կատուն ու աքլորը տեղավորվեցին ծառի ճյուղերին:
2. Բոլորը քայլեցին դեպի աքլորի տեսած լույսը: Իսկապես որ լույսը տարածվում էր տան ներսից, այդտեղ մի խումբ ավազակներ էին ապրում:
3. Հեռվում մի լույս նկատեց ու անմիջապես ձայն տվեց ներքևում գտնվողներին:

   -Մոտերքում պետք է, որ տուն լինի, որովհետև ես այստեղից լույս եմ տեսնում:
4. Իսկ աքլորը, որ աղմուկից արթնացել էր, ինչքան կոկորդում ուժ ուներ, կանչեց.

   -Ծուղրուղո՛ւ ...
5. Հենց որ սենյակը դատարկվեց, մեր չորս ճամփորդները նստեցին սեղանի շուրջը և մինչև վերջ կերան ավազակների թողածը:
6. Այդ օրվանից ավազակները սիրտ չարեցին վերադառնալ, իսկ երաժիշտները գոհ և երջանիկ ապրեցին այնտեղ, և նույնիսկ համարձակվում եմ ասել՝ ապրում են մինչև օրս:

Աշակերտները թերթիկները ձեռքներին բռնած, խառնված հերթականությամբ կանգնեցին: Առաջարկեցին որոշել ճիշտ հերթականությունը: Խմբային աշխատանքից հետո աշակերտները ներկայացրին դասավորության իրենց տարբերակը: Առաջին խումբը աշխատանքը սխալ կատարեց, որը ուղղվեց մյուս խմբերի կողմից: Երբ դասարանը եկավ ընդհանուր հայտարարի, առաջարկեցինք կրկին կարդալ տեքստը և տեսնել՝ արդյոք իրենց որոշած դասավորությունը համապատասխանու՞մ է բնագրի դասավորությանը:

Դասը բաժանեցինք տրամաբանական հատվածների, և աշակերտները

պատասխանեցին հետևյալ հարցերին:

1. Որտե՞ղ որոշեցին գիշերել թափառական երաժիշտները:

Թափառական երաժիշտները որոշեցին գիշերել անտառում:

1. Թափառական երաժիշտները ինչու՞ փոխեցին իրենց որոշումը:

Նրանք հեռվում լույս տեսան և գնացին այդ լույսի ուղղությամբ:

2. Իրենց նպատակին հասնելու համար ի՞նչ պլան մշակեցին երաժիշտները:

Չորսով հավաքվեցին իրար գլխի և որոշեցին վախեցնել ավազակներին:

4. Ինչպե՞ս կարողացան հասնել իրենց նպատակին:

Նրանք կարողացան հաղթել, քանի որ միասնական գործեցին:

Եզրակացրեցիեք, որ

«Միասնականությունը ուժ է»

«Չկա չարիք, առանց բարիքի»

«Հագուստի նորն է լավը, ընկերոջ՝ հինը»

«Գյուղ կանգնի, գերան կկոտրի»

«Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք»

«Հավատարիմ ընկերը գին չունի»

«Այսօրվա գործը վաղվան չեն թողնի»

Խմբային աշխատանքի միջոցով հեքիաթի այս հատվածի կարմիր գրվածներից աշակերտները ընտրեցին այն արտահայտությունները, որոնք նշանակում են՝

ա) կանչել- ձայն տալ,

բ) հասկացնել - նշան անել,

գ) նայել- հայացք գցել,

դ) մի տեղ հավաքվել, խմբվել - հավաքվել իրար գլխի,

ե) համարձակվել - սիրտ անել,

զ) մթնել - մութն ընկավ,

է) վռնդել - դուրս անել:

Ավարտելուց հետո խմբերը ներկայացրին իրենց աշխատանքները: Կատարեցինք ընտրովի ընթերցանություն: Աշակերտներին առաջարկեցինք տեքստից գտնել միայն երկխոսությունները նշել, թե ո՞ր հերոսներն են երկխոսության մեջ

մտել:

-Մոտերքում պետք է, որ տուն լինի, որովհետև ես այստեղից լույս եմ տեսնում (աքլոր):

-Ինչ խոսք, ավելի հարմար կլիներ տանը գիշերել, քան մութ անտառում,- ուրախացավ ավանակը (ավանակ):

-Ինձ համար էլ լավ կլիներ, - ավելացրեց շունը, - մի կտոր ոսկոր կճարեի (շուն):

Աշակերտները զույգերով ընտրեցին իրենց դուր եկած երկխոսությունը և ընթերցեցին:

Ֆիզկուլտ դադար՝ աշակերտները կանգնեցին շրջանով: Մի աշակերտ կանգնեց շրջանի մեջտեղում, ասաց դարձվածքը և գնդակը նետեց մեկ այլ աշակերտի:Աշակերտը ասաց նրա նշանակությունը և գնդակը հետ նետեց:

Դարձվածքներն էին՝գլուխ տանել – ձանձրացնել

ձայնը գլուխը գցել – գոռգռալ

դառը դատել - դժվար աշխատանք անել:

<u>Կշռադատման փուլ</u>՝ Գրատախտակին փակցրինք կատակ նկարներ, աշակերտները բացատրեցին այդ նկարների նշանակությունը:

« Քառաբաժան մեթոդով » ամփոփեցինք դասը:

Ի՞նչ ձայներ էի լսում: Կատվի մլավոց, շան հաչոց, ավանակի զռռոց, քրքիջ, աքլորի ծղրտոց:	Ի՞նչ էի տեսնում: Ավազակների վախեցած դեմքեր:
Ի՞նչ էի զգում: Զգում էի հպարտություն, որ կենդանիները կարողացան դուրս գալ	Ի՞նչ եմ կարծում: Հաղթեցին, քանի որ միասնական գործեցին:

դժվար իրավիճակից:	

Աղյուսակ *3*

Աշակերտները աբողջացրին հետևյալ ասացվածքները:

Աջով տուր...

....այն էլ կինձես:

…. որ ձախով առնես

Ինչ որ ցանես...

…..ջուրը գցիր:

Լավությո՛ւն արա...

Աշակերտները ստացան հետևյալ պատասխանները `

Աջով տուր, որ ձախով առնես:

Ինչ որ ցանես, այն էլ կինձես:

Լավությո՛ւն արա, ջու՛րը գցիր:

Տնային աշխատանք

Գրե՛լ հետևյալ դարձվածքների նշանակությունը:

. Ականջները սրել

. Չոր գլուխ

. Աչք փակել

. Աչքդ լույս

Գնահատում

Դասի արդյունքում սովորողները կարողացան՝

1. Համալրել իրենց ճանաչողական և լեզվական գիտելիքները:
2. Հարստացնել իրենց բառապաշարը նոր դարձվածքներով և ասացվածքներով:
3. Ընկալել տեքստը, տեքստի գաղափարը, արտահայտել իրենց վերաբերմունքն ու կարծիքը դրանց մասին:

4. Զարգացնել նկարը «կարդալու» հմտությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դարձվածքների ու ասացվածքների ուսուցման ուսումնասիրությունը կրտսեր դպրոցում բերում է հետևյալ եզրակացություններին՝

1. Դաձվածքները և ասացվածքները առօրյա, ժողովրդախոսակցական ոճին բնորոշ լեզվական միավորներ են, որոնք բնորոշում են ժողովրդի լեզվամտածողությունը: Դրանք նաև պատկերավորման միջոցներ են, որոնք խոսքին արտահայտչականություն ու պատկերավորություն են հաղորդում:

2. Դարձվածքների և ասացվածքների ուսուցումը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանն ու խոսքի զարգացմանը: Ինչպես նոր բառերի, այնպես էլ դարձվածքների ու ասացվածքների ուսուցման դեպքում նախ բացատրվում է դրանց իմաստը, որը հաճախ ուղեկցվում է բառաշարքով կամ նկարով, այնուհետև կա-տարվում է դարձվածքի կամ ասացվածքի ընթերցում, կիրառում նախադասության մեջ:

3. Դարձվածքների և ասացվածքների ուսուցման ժամանակ առաջարկվում է մեթոդական հետևյալ քայլաշարը՝ դարձվածքի, ասացվածքի առանձնացում, իմաստի բացատրում, դարձվածքի, ասացվածքի բացատրություն նկարի, հականիշ դարձվածքի, ասացվածքի միջոցով, դարձվածքների, ասացվածքների համեմատում՝ իմաստային տարբերությունների բացահայտման նպատակով, դարձվածքների, ասացվածքների բացատրություն՝ կռահման ճանապարհով, դարձվածքների, ասաց-վածքների բացատրություն՝ տեղեկատվական նյութերի միջոցով, դարձվածքների, ասացվածքների ուսուցում՝ մեկնաբանող նկարագրության հնարի միջոցով:

4. Դարձվածքների և ասացվածքների ուսուցման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել դարձվածքների, ասացվածքների և դրանցով նախադասությունների կազմմանն ուղղված աշխատանքներին՝ դրանց ուսուցումը դիտարկելով որպես ընթերցանության կարևոր բաղադրիչ: Պետք է սովորեցնել ճիշտ և տեղին գործածել դարձվածքներն ու ասացվածքները:

5. Չպետք է սահմանափակվել մեկ դասաժամով, պահանջվում է հետևողական աշխատանք, որպեսզի աշակերտները դարձվածքները և ասացվածքները կիրառեն ոչ միայն բնագիրը վերարտադրելիս, այլև ինքնուրույն խոսքում:

6. Դարձվածքների և ասացվածքների ուսուցումը պետք է նպաստի կրտսեր դպրոցականների հաղորդակցման կարողությունների, կապակցված և արտահայտիչ խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բադիկյան Խ., Դարձվածքային ոճաբանություն, Երևան, 2000:
2. Բադիկյան Խ., ՈՒսումնական դարձվածքաբանական բառարան,Երևան 2002:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ», 2018, 344 էջ:
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.,Մայրենի 4,Երևան, «Էդիտ Պրինտ», 2015, 112 էջ:
5. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, 2007:
6. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.,Երևան, 2016, 272 էջ:
7. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4., «Մանմար», 2016, 176 էջ:
8. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան,1,2013 :
9. Հարությունյան Ս., Բնագիտական առարկաներ, Երևան, 2010:
10. Հովսեփյան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892:
11. Ղանալանյան Ա., Հայկական առածանի, Երևան, 1951:
12. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու: Բառակազմություն, դարձվածքաբանություն, բառագիտություն, Երևան, 1991:
13. Մնացականյան Ե., Գրականագիտական զեկույց-բառարան, Երևան, 2013:
14. Ջահուկյան Գ., Աղայան Է. և ուրիշներ, Հայոց լեզու,Երևան, 1980:
15. Սահակյան Վ.Ա., Սահակյան Վ.Վ., Ներսիսյան Ռ.Ժ., Դպրոցական բառագիրք,

Երևան, 2019, 464 էջ:
16. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Մայրենի 2, Երևան, «Մանմար», 2016, 160 էջ:
17. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., Մայրենի 3, Երևան, «Մանմար», 2018, 160 էջ:
18. Սարգսյան Վ., Մայրենի 1., Երևան, «Մանմար», 2015, 64 էջ:
19. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածքաբանական բառարան, Երևան,1975:
20. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու,Երևան, 1999:
21. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս», 1980, 564 էջ: